ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
«ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

2011 թվականին Հայաստանի տնտեսության զարգացումները բնութագրվել են տնտեսական ակտիվության արագացմամբ և մակրոտնտեսական կայունության բարելավմամբ: Տնտեսական աճի 2011 թվականի ցուցանիշը, ավելի քան կրկնակի, գերազանցել է նախորդ տարվա 2.1 տոկոսի մակարդակը և ապահովել տարվա համար կանխատեսված 4.6 տոկոս մակարդակը:

2011 թվականին ՀՀ մակրոտնտեսական միջավայրի հիմնական զարգացումները պայմանավորված էին համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման և մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների ազդեցությունների դրսևորմամբ: Մակրոտնտեսական ձևավորված միջավայրում, ՀՀ կառավարությունը 2011 թվականին ընդհանուր առմամբ իրականացրել է հավասարակշռված հարկաբյուջետային քաղաքականության, որը նպատակաուղղված էր մի կողմից՝ տնտեսական ակտիվության վերականգնմանը, իսկ մյուս կողմից՝ պետական պարտքի կայունության ապահովմանը: Հարկաբյուջետային քաղաքականությունն ուղեկցվել է ՀՀ պետական բյուջեի պակասուրդի կրճատմամբ, ինչը զգալիորեն նպաստել է մակրոտնտեսական կայունության բարելավմանը:

Նման հարկաբյուջետային քաղաքականությանը զուգահեռ, ՀՀ կենտրոնական բանկը տարեսկզբից խստացրել է դրամավարկային պայմանները՝ նպատակաուղղված ձևավորված բարձր գնաճային միջավայրի մեղմմանն ու գնաճային սպասումների խարսխմանը: Տարվա երկրորդ կեսից, գնաճային միջավայրի աստիճանական մեղմման պայմաններում, կենտրոնական բանկը հիմնականում վարել է չեզոք դրամավարկային քաղաքականություն՝ անփոփոխ թողնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Ընդ որում, գնաճային միջավայրի մեղմման ֆոնի ներքո սեպտեմբերին ԿԲ-ն իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով: Նշված դրամավարկային քաղաքականության արդյունքում տարին ամփոփվել է գնաճի տարեկան 4.7% ցուցանիշով՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում:

Տարվա ընթացքում ՀՀ տնտեսական աճի նախանշված մակարդակի ապահովումը անդրադարձավ նաև պետական բյուջեի եկամուտների վրա՝ նպաստելով ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների տարվա համար ծրագրված մակարդակին համապատասխան հավաքագրմանը: Արդյունքում, ՀՀ պետական բյուջեի տարեկան եկամուտների գծով արձանագրվել է 12.9% աճ, ընդ որում հարկերն աճել են 10.1%-ով, իսկ պարտադիր սոցիալական վճարների գծով

աճը կազմել է 17.2%: Միևնույն ժամանակ, տարվա արդյունքում ՀՆԱ-ում հարկային եկամուտները՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, նախորդ տարվա նկատմամբ աճել են 0.4 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ-ի 20.4%-ը: Ընդ որում, ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և տուրքերի հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 17.1%, ինչը սակայն 0.1 տոկոսային կետով ցածր է տարվա համար կանխատեսված ցուցանիշից: Հատկանշական է, որ հարկային եկամուտների կազմում աճել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ 1.9 տոկոսային կետով, իսկ անուղղակի հարկերինը նվազել է 2.7 տոկոսային կետով:

Համախառն պահանջարկի տեսանկյունից, ՀՀ պետական բյուջեի 2011 թվականի ծախսային քաղաքականությունը նախորդ տարվա նկատմամբ բնութագրվել է զսպող ազդեցության դրսևորմամբ: 2011 թվականին, նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 9.0% աճի պայմաններում, ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 3.4%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի տեսակարար կշռի 1.5 տոկոսային կետով նվազման: Արդյունքում, 2011 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 25.8%-ը՝ պետական բյուջեի մասին օրենքում կանխատեսված 26.6%-ի և 2010 թվականի փաստացի 27.3%-ի դիմաց: Տարվա արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերը 5.3%-ով զիջել են նախատեսված մակարդակը և կազմել տարեկան ծրագրվածի 94.7%-ը: Ընդ որում, փաստացի ծախսերի շեղումը ծրագրվածից գրեթե հավասար չափով պայմանավորված է թե՛ ընթացիկ ծախսերի, և թե՛ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով առաջացած տնտեսումներով: Միևնույն ժամանակ, 2011 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի մակարդակը նախորդ տարվա նկատմամբ աճել է 6.4%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 8.9%-ով:

Բյուջեի եկամուտների ծրագրված ցուցանիշի ապահովման և ծախսերի գծով վերը նշված տնտեսումների պայմաններում բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 68.2 մլրդ դրամով և կազմել է 105.7 մլրդ դրամ, որը շուրջ 53.1 մլրդ դրամով պակաս է տարեկան ճշգրտված ծրագրով նախատեսված ցուցանիշից: Միևնույն ժամանակ նվազել է պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով 2.8%՝ բյուջեում կանխատեսված 3.9%-ի և 2010 թվականի փաստացի 5.0%-ի դիմաց: Տարվա արդյունքում, բյուջեի պակասուրդի 62.4%-ը ֆինանսավորվել է պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրների, իսկ 37.6%-ը արտաքին աղբյուրների հաշվին: Ինչ վերաբերում է պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամտի հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորմանը, ապա այն ապահովել է տարվա համար նախատեսված 30.0 մլրդ դրամը՝ միևնույն ժամանակ ուղեկցվելով պետական պարտատոմսերի միջին

ժամկետայնության աճով (2011 թվականին կազմել է 1698 օր, իսկ 2010թ. 1353 օր): Տարվա ընթացքում պետական արժեթղթերի տեղաբաշխման ծրագրի ապահովմանը նպաստել է նաև հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման ոլորտում գործողությունների արդյունավետ իրականացումը:

Այսպիսով, 2011 թվականին ՀՀ կառավարության կողմից հավասարակշռված հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը ուղղորդվելով ՀՀ կառավարության միջին ժամկետ ռազմավարության ծրագրով նախատեսված պետական բյուջեի պակասուրդի կրճատման որդեգրված քաղաքականությամբ, իրական նախադրյալներ կստեղծի մակրոտնտեսական կայունության պահպանման համար և կնպաստի միջին ժամկետում գնաճի նպատակային թիրախի ապահովմանը: